

DOI: 10.57192/18291864-2022.4-304

Մարինե Դ. Ղազարյան

**ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ
ՀԱԿՈՒՄ ՄՆՁՈՒՐՈՒ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ***

Բանալի բառեր – Հակոբ Մնձուրի, ազգային ինքնություն, հայրենաձանաչողություն, արժեհամակարգ, ստեղծագործական մտահոգություն, տեղագրական պատկերներ, տեղանուններ, թրքացված անուններ:

Մուտք

Ներկա աշխարհաքաղաքական մարտահրավերները, մշակութային համընդհանրացման գործընթացները անսկատելիորեն նվազեցնում, վերացնում են «յուրայինի» և «օտարի» միջև եղած սահմանները՝ աստիճանաբար նույնատիպացնելով, այն է՝ ոչնչացնելով ազգային մշակույթը, ուստի պարտվում է նախ մշակույթը, ապա միայն՝ երկիրը¹:

Ինքնության կորստի վտանգը մեծ է հատկապես փոքր ազգերի համար: Բացառություն չէ նաև հայոց ազգային ինքնությունը: Ուստի ազգային արժեքների տրոհման տրամաբանությամբ զարգացող ներկա աշխարհում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ինքնության խնդիրներին, ինչպես նաև նորովի արժևորել և միջազգային հանրությանը ճանաչելի դարձնել դարերով ամբարված սրբազան արժեքները:

Ազգային առանձնահատկությունների պահպանության խնդրի առջև հայ ժողովուրդը կանգնած է եղել իր պատմության գրեթե ողջ ընթացքում: Ինքնության կորստի վտանգն ամենից առաջ գիտակցել են հայ մտավորականները, որոնք նախանձախնդրություն

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10.2022:

¹ Տե՛ս **Մաթևոսյան Հ.**, Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ 62:

են ցուցաբերել ինքնության գրեթե բոլոր բաղկացուցիչների պահպանության առումով: Հայ ինքնության պահպանությանն է միտված նաև **տեղագրությունը**, որը մեզ է ավանդվել ինչպես աշխարհագրական բնության աշխատությունների, այնպես էլ գեղարվեստական գրականության միջոցով:

Հայ գրական աշխարհագրության մեջ իրենց ուրույն տեղը ունեն Արևմտյան Հայաստանի տեղավայրերի պատկերները՝ որպես կորուսյալ աշխարհի վրա բացվող լուսամուտներ՝ ճանաչողական բարձր արժեքով: Դրանք օգնում են պատկերացում կազմելու Արևմտյան Հայաստանի այս կամ այն երկրամասի աշխարհագրության մասին և կարևորվում են ազգային ինքնության համակողմանի նկարագիրը կազմելու հարցում:

Ինքնության այս կարևոր շերտը բացահայտելու լայն հնարավորություն են ընձեռում բազում հայ գրողների գեղարվեստական երկերը, որովհետև դրանցում ծննդավայրը՝ որպես աշխարհագրական տարածք, ինքնատիպորեն գեղագրված է, իսկ ոմանց գործերում, կարելի է ասել, քարտեզագրված: Բնաշխարհն իր ողջ տարածական ընդգրկմամբ պատկերող գրողներից է **Հակոբ Մնձուրին** (1886–1978)՝ արևմտահայ գյուղագրության վերջին ներկայացուցիչը, որը գյուղի թեմային իր նվիրումը, մի շարք շարժառիթներից բացի, մեկնաբանում էր նաև նրանով, որ որևէ մեկը, կարդալով իր երկերը, կարող է իր պատմվածքների քարտեզը, իր գրական աշխարհագրությունը կազմել:

Մնձուրու արձակի տեղագրական պատկերների վերհանումը մեզ հետաքրքրում է երկու առումով. **առաջին**՝ աշխարհագրական՝ որպես Արևմտյան Հայաստանի երզնկա գավառի բնաշխարհը վերականգնելու յուրօրինակ փորձ՝ առանց աշխարհագրական ճշգրտումներում խորանալու մտադրության, **երկրորդ**՝ հոգևոր՝ ուշադրության կենտրոնում պահելով տեղանունները՝ որպես հայ ինքնության անքակտելի մաս:

Տեղագրական մանրամասները որպես վտանգված
ինքնության վերականգնում

Մնձուրու արձակն աչքի է ընկնում տեղանքի ամբողջական և համակողմանի պատկերներով, որոնք ստեղծվել են հայրենի բնու-

թյան հետ սերտ շփումներից ձևավորված արվեստագետի նուրբ ճանաչողությամբ. «Ես տեղի մը, աշխարհագրութեան մը մարդը, սովորութիւնները, բարքերը կը պատմեմ: Եթէ Ակը, Արմտանը, Տիվրիկը կամ Երզնկան, Արաբկիրը, Չմշկածագը կը խոսեցնեն, պանծացնելու համար չեմ ըներ: Միմիայն ատ տեղերը լաւ կը ճանչնամ, քայլ-քայլ գիտեմ, ատկէ է: Եթէ ես Մշեցի, Գոնիացի, Տրապիզոնցի ըլլայի, Մուշի, Գոնիայի, Տրապիզոնի մարդը, աշխարհագրութիւնը պիտի պատմէի»²: Պարզ է, որ գիտելիքների կուտակումը մեծապես նպաստել է ճշմարիտ արվեստի ստեղծմանը: Սակայն Մնծուրու արձակի հմայքը չի բխում միայն տարածքի, տարբեր ազգերի հոգեկերտվածքի, բարքերի ու սովորությունների իմացությունից: «Տեղեր ուր ես եղեր եմ» ժողովածուի պատումներից մեկում նա ընդգծում է ներկայացվող նյութը գրավիչ մատուցելու վարպետությունը. «Պիտի չընդօրինակենք իրականութիւնը, պիտի գերազանցենք բնութիւնը, իրերը: Մեր նկարներուն մէջ մեր ծառերը, խոտերը, մեր լեռները, ծովերը, գետափ մը, ուռիները գետափի մը երկայնքին, մարդ մը, փողոց մը, շուկայ մը պիտի հեւան կեանքով, գոյներով, լոյսերով: Անձնական գրականութիւն մը պիտի ընենք: Մենք պիտի ըլլանք մեր գործերուն մէջ: Առարկայականը, անձնականը, չկայ, չըլլար, սուտ մըն է արդէն: Մէր վէպը, պատմուածքը, քերթուածը կամ թատերախաղը արբեցութենէ արբեցութիւն պիտի տանին մեր ընթերցողները»³: Իսկ ինչ վերաբերում է Մնծուրի գրողին, ապա նա սուկ վավերագրող չէ. նրա պատումներն աչքի են ընկնում հոգեբանական ուրույն և ուշագրավ անցումներով, ինչը գեղարվեստական բարձրարժէք գրականության չափանիշ է:

Մնծուրու պատումներում պատկերվում է նախաեղեռնյան գյուղը, դրանց հիմնական մասի գրության ժամանակը հետեղեռնյան տարիներն են, ծննդավայրը կենդանագրելու պատճառը՝ գրի միջոցով կորուսյալ հայրենիքն անհետացումից փրկելու գիտակցումը, քանի որ նա հանդգնված էր, որ «Գիրը չի մեռնիր, գիրը անմահ է»⁴: Կ. Պոլսի «Մարմարա» օրաթերթում հարցազրույցի ձևով ներկայացված «Ըսին» հոդ-

2 **Մնծուրի 3.**, Կռունկ ուստի՞ կուգաս, Իսթանպուլ, 1974, էջ 12:

3 **Մնծուրի 3.**, Տեղեր ուր ես եղեր եմ, Իսթանպուլ, 1984, էջ 197:

4 Նույն տեղում, էջ 8:

վածաշարում արտահայտված մտքերից ակնհայտ է դառնում Մնձուրու ստեղծագործական հենց այդ մտահոգությունների և նպատակների առաջնահերթությունը. «Ըսին՝ – ինչպէ՞ս գիղագիր եղար: / Ըսի – Անգգալաբար եղայ: Մինչեւ 1950ը չէի խորհեր ատոր վրայ: Անկէ յետոյ գտայ, ըսի ես ինձի թէ իմ գործս գիղը պատմելը ըլլալու է, կամ առաւելապէս զայն պէտք է տամ. հաւանաբար պիտի չսահմանափակուէի անոր մէջ, եթէ գիղին գոյութիւնը շարունակուեր: Անոր անհետացումն ալ պատճառներէն մեկն է»⁵: Այս մտահոգությամբ է պայմանավորված գեղարվեստական մեթոդի ընտրությունը, որի առնչությամբ գրականագետ Ս. Դանիելյանը գրում է. «Գրական հանձնառությունը նախորոշում է գրողի իր ձակատագիրն ու ուղղությունը: Հ. Մնձուրին դառնում է նատուրալիստ, դիմում է գեղարվեստական տարեգրության քննական սկզբունքին, նրա հիշողությունը հավաքական է, ընթերցողի առջև ամբողջական-անծայր գյուղական համայնապատկերն է»⁶: Ուրեմն Մնձուրու գիրը ոչ այլ ինչ է, քան հայ ինքնության տագնապը պատմողի գիր:

Ինքնության կորստյան վտանգի գիտակցումը մղում է գրողին պատկերելու իրականությունն ամենայն մանրամասնությամբ: Գրականագետ Վ. Գաբրիելյանը գրում է. «Անցած տասնամյակները կարծես օրեր են նրա համար, բացառիկ հիշողությամբ նա վերհիշում է բոլոր մանրամասները»⁷: Ե. Տեր-Խաչատրյանը, Մնձուրուն համարելով գրական մանրամասների վարպետ, նշում է. «Նրա գրականութեան մէջ ամեն մի մանրադէպ, ամեն մի մանրամասն իմաստաւորուած է: Եւ պատահական չէ, որ առանձին մանրամասները կրկնուում են տարբեր պատմուածքներում: Հեղինակը դրանով նպատակ ունի ընդգծելու իր ասելիքը, մտահոգ է, որ ընթերցողը չմոռանայ մի անգամ արդէն ասուածը»⁸: Ինչ վերաբերում է տեղագրական մանրամասներին, ապա հարկ է նշել, որ դրանք հատկանշվում են տեղանունների պարտադիր հիշատակմամբ, մատնանշումով, կրկնությամբ, դրանց խոսակցական տարբերակների գործածությամբ, նախկին՝ հայերեն և ներկա՝ թուրքերեն անվանումների արձանագրմամբ: Այս ամենն ինքնանպատակ չէր. Մնձուրին շատ լավ հաս-

5 «Մարմարա», Կ. Պոլիս, 1968, 17-ը հունիսի:
 6 Դանիելյան Ս., Հակոբ Մնձուրի, «Կանչ», Եր., 1999, N 23, էջ 5:
 7 Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., 2016, էջ 318:
 8 Տեր-Խաչատրյան Ե., Խաղաղ տողեր, Եր., 2021, էջ 312:

կանում էր, որ տեղանունները հայ ինքնության բաղկացուցիչներ են և արժեքավոր տեղեկություններ են պարունակում համապատասխան աշխարհագրական միավորների մասին:

Առանձնակի սիրով է պատկերված նրա բնօրրանը՝ Արևմտյան Հայաստանի Երզնկա գավառը, հատկապես ծննդավայր գյուղը, որի տեղագրական պատկերները կերտված են այնպիսի վարպետությամբ, որ ընթերցողի աչքի առջև գծագրվում են պատկերվող տեղավայրերի սահմանները, տեսանելի է դառնում տեղանքի յուրաքանչյուր միավոր: Իր գրույցներից մեկում Մնծուրին, Մեծարենցի օրինակով կատարելով «ինքնադատության փորձ մը»⁹, նկատում է. «...Մնծուրի գիւղին սիրահարն է: Աւելի ճիշդը **ի**ր գիւղին սիրահարը, «Կապոյտ լոյս»ը ուշադրութեամբ կարդացող մը պիտի գիտնայ այդ գիւղին աշխարհագրական դիրքը, հոն տարիներով ապրած մեկու մը չափ...»¹⁰:

Դանիել Վարուժանը Ղևոնդ Ալիշանի մասին մի առիթով գրել է. «Ալիշանը բանաստեղծ էր, որ գիտությունն կընէր: Այս կը նշանակէ, թէ գիտությունը կը ժողովրդականացնէր»¹¹: Կարծում ենք՝ նույնը կարելի է ասել նաև Մնծուրու մասին:

1. Տեղանունները՝ ինքնության բաղկացուցիչներ

Ինչպես նշեցինք, Մնծուրին քարտեզագրողի ձգբրտությամբ է կերտում ծննդավայրի պատկերները: Ահա այդպիսի մի պատկեր. «Իմ գաւառիս թուրքերէն անունը Գումուչայ է, մենք Ղումուչայ կ'ըսենք: Ղումուչայը Եփրատի ձախ ափը Քէմախի եւ Ակնայ միջեւ խորունկ աւազուտ ձորերով գաւառակ մըն է: 66 կտոր գիւղ ունի: Ամէնէն անուանիները երկու Արմտաններն են»¹²: Ուրեմն Արմտանները երկուսն են, և ինքը ծնվել է Փոքր Արմտանում. «Իմ ծննդավայրս նահանգին հարավային սահմանին ճիշտ ավարտին, Եփրատի ձախ ափին, ցորենչատ, արգավանդ գավառի մը մեջ, համանուն, մեկը՝ մեծ, մյուսը՝ փոքր, զույգ գյուղերե կբաղկանար: Ես փոքրեն էի»¹³:

9 **Մեծարենց Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1981, էջ 234:

10 **Հատուճեան Ռ.**, Ասուլիս մտատրականի մը հետ, «Մարմարա», 1958, 1-ը մայիսի, էջ 2:

11 **Վարուժան Ղ.**, Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հատ. 3, Եր., 1987, էջ 183:

12 **Մնծուրի Յ.**, Արմտան, Իսթանպուլ, 1966, էջ 63:

13 **Մնծուրի Հ.**, Երկեր, Եր., 1986, էջ 85:

Իր գյուղին առնչվող մեկ այլ տեղեկության մեջ Մնծուրին ճշգրտում է Արմտանի տեղադրությունը. «Արմտանը մեր թուականէն առաջ երկրորդ հազարամեակին հեթական պնակիտներուն մէջ յիշատակուած Արմատանան է, Մնծուրը՝ Մուզուրին՝ նոյնպէս նոյն պնակիտներուն մէջ յիշուածը: Խայասայի կամ Հայասայի արեւմտեան մասին մէջ, Եփրատի աջը, Արմեններուն գալէն առաջ, Փոքր ասիական բնիկ Խայերու կամ հայերու հնագույն տեղանուններ են»¹⁴: Ուրեմն գյուղը Եփրատի ոչ թե ձախ ափին էր, այլ աջ, ինչը ճշգրտվում է գետի հոսանքի ուղղությամբ: Մեկ այլ պատմվածքում գյուղի անունը հիշատակվում է խոսակցական տարբերակով. «Իմ գյուղիս Պզտիկ գյուղ կըսեին, երկու Արմտաններեն պզտիկը ըլլալուն»¹⁵: Նշելով իր գյուղի բնութագրիչները՝ **փոքր, պզտիկ**, գրողը հաստատագրում է իրականությունը, ինչը, լեզվաբանների կարծիքով, տեղանվան առաջնային գործառույթն է¹⁶:

«Տեղեր ուր ես եղեր եմ» ժողովածուում Մնծուրին իր գավառակին՝ Ղուռուչային, տալիս է մեկ այլ՝ **Չորգետ** անունը. «Էրզուրում կուսակալութեան Երզնկա գաւառէն, Չորգետ գաւառակին Արմտաններէն»¹⁷: Հարկ է նշել, որ գավառակի տարածքով հոսում էր նոյն անունը կրող գետ¹⁸, որը, տեղանունների բառարանի հաղորդմամբ, ամռանը ցամաքելու պատճառով կոչում էին **Յամաք գետ**¹⁹: Պատումներից մեկում այս փաստը գեղարվեստականացված է, ու թեև գետի անունը նշված չէ, և պատկերվող եղանակն աշունն է, սակայն հասկանալի է, որ խոսքը Ղուռուչայի մասին է. «Գետն ալ ափէ ափ այնքան նուազեր էր որ գրեթէ ցամքեր էր: Ջուրերը կրունկներդ անգամ չէին թաղեր»²⁰: Ուրեմն գետի ցամաքելու փաստի հետ է կապվում **Կուրուչայ** անվանումը, որը նշանակում է

14 Մնծուրի Յ., Արմտան, էջ 175:

15 Մնծուրի Հ., Երկեր, Եր., 1986, էջ 252:

16 Այս մասին մանրամասն տես **Դիլբարյան Ն.**, Հայկական տեղանվանահիմքերի իմաստային դաշտը, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2007, N 1, էջ 180-187:

17 Մնծուրի Յ., Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 115:

18 Ն. Դիլբարյանը աշխարհագրական տարբեր միավորների և բնակավայրերի՝ նույն անուն ունենալու պատճառը համարում է տեղանվանաստեղծ բաղադրիչների սակավությունը (տես **Դիլբարյան Ն.**, Հայկական տեղանվանահիմքերի իմաստային դաշտը, էջ 180):

19 Տես **Հակոբյան Թ. Խ., Սելիք-Քախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, ԵՀ հրատ., Եր., 1991, էջ 296:

20 Մնծուրի Յ., Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 167:

«կույր», այն է՝ «**չոր, ցամաք**»: Այստեղից հասկանալի են դառնում գավառակին և գետին տրվող **Կուրուչայ** կամ **Չորգետ** անվանումները: Իսկ **Ղուռուչայ**-ը **Գուռուչայ** թրքացված անվան հնչյունական տարբերակն է: Չայնաբանական այդ առանձնահատկությունը բազմաթիվ օրինակների մեջքերումներով հրաշալիորեն բացատրված է «Իմ գաւառիս թուրքերէնը» պատմվածքում. «Իմ գաւառիս թուրքերը, քուրդերը, ինչպէս մենք՝ հայերս թուրքերէն *գիմով* սկսող բոլոր բառերը *ղայրով* կ'արտասանենք, մենք *գըն դըի* կը փոխենք: Բոլոր արեւելեան գաւառներու մէջ ալ նոյնը կ'ընեն: / Իմ գաւառիս թուրքերէն անունը Գուռուչայ է, մենք Ղուռուչայ կ'ըսենք»²¹:

Մնծուրին իր պատմվածքների ժողովածուներից երկուսի համար որպես վերնագրեր ընտրել է հայրենի բնաշխարհի անունները: Առաջին ժողովածուն կոչել է բնաշխարհի լեռան անունով՝ «Կապույտ լույս» (Կ. Պոլիս, 1958)²², երկրորդը՝ հայրենի գյուղի՝ «Արմտան» (Կ. Պոլիս, 1966): «Իմ գրքերուս միակ յարմար անունները ասոնք ուզեցի որ ըլլան...»²³, - նշում է նա: Պատմվածքների երրորդ գիրքը նույնպես վերնագրված է հայրենի եզերքի անունով, սակայն խորհրդանշական անունով, որն արտահայտված է պանդուխտի կարոտաբաղձ հարցումով՝ «Կռունկ ուստի՞ կուգաս» (Կ. Պոլիս, 1974)²⁴:

21 **Մնծուրի Յ.**, Արմտան, էջ 63:

22 Այս ժողովածուի խորագիրը հետաքրքիր մեկնաբանությունների տեղիք է տալիս: «Կապույտ լույս» արտահայտությունն առաջնային իմաստով մատնանշում է լույսի երեք հիմնական գունատեսակներից (կարմիր, կանաչ, կապույտ) մեկը: Պարզ է, որ Մնծուրու համար «Կապույտ լույս» անվանումն ունի կարևոր և նշանակալից իմաստ՝ խորհրդանշելով հայրենի բնաշխարհը: Հր. Մաթևոսյանը Կապույտ լույս անվան մեջ բացառում է խորհրդանշական որևէ երանգի առկայությունը. «Մյուս գրքի «Կապույտ լույս» անունը մոտավոր առնչություն անգամ չունի գրական-գեղարվեստական որևէ հոսանքի գույների ու խորհրդանիշների հետ, իրենց լեռան անունն է» (**Մաթևոսյան Հ.**, Անընդհատ, անվերջ վերադարձ, **Մնծուրի Հ.**, նշվ. աշխ., էջ 522): Իսկ ահա Կ. Դավթյանը կապույտի իմաստային բացահայտումներ է անում այն հատկանշական համարելով Մնծուրու ողջ ստեղծագործության համար: Նրա ընկալմամբ կապույտ գույն ունի Մնծուրու բնապաշտությունը. «Կարդում ես գրքերը, հեռանում նրանցից, և նոր միայն նրա բնապաշտության **կապույտ լույսը** (ընդգծումը մերն է – Մ. Դ.) սկսում է պարուրել քեզ» (**Դավթյան Կ., Մաթևոսյան Հ.**, Հեռացող աշխարհի առաջալը, «Գրական թերթ», Եր., 1976, նոյեմբեր, N 47, էջ 3): Ստացվում է Մնծուրու բնապաշտությունը, որ գալիս է կորսված ծննդավայրի նկատմամբ պաշտամունքի հասնող սիրուց ու անսահման կարոտից, կապույտ է: Իսկ կապույտը կարոտի գույնն է հեռավոր այն եզերքների, ուր մարդը երբեք չի կարող վերադառնալ (դրսևորումները շատ են հայ գրականության մեջ): Ուրեմն կապույտը Մնծուրու ստեղծագործության ընդհանրական գույնն է, որի սիմվոլիկան ակնառու դրսևորումներ չունի:

23 «Մարմարա», 1963, 28-ը նոյեմբերի:

24 Գրողի մահից տարիներ անց՝ 1984 թ., տպագրվեց ևս մեկ ժողովածու՝ «Տեղեր ուր ես եղեր եմ» խորագրով:

Գրողի գրական անվան նախահիմքը ևս կա հայկական աշխարհագրության մեջ: Հակոբ Տեմիրձյանը **Մնծուրի** գրական անունը փոխառել է հայրենի Մնծուր կոչվող լեռնաշղթայից: Ակադեմիկոս Ա. Ղանալանյանը Մնծուր լեռան մասին ստուգաբանական-բացատրական ավանդության մեջ գրում է, որ լեռն իր անունը ստացել է Մունգուրի հովվի անունից²⁵: **Մնծուր** բառի համար հոմանիշների բառարանում նշվում են **մոխրացված, այրված** հոմանշային տարբերակները²⁶: 1906 թ. «Մասիս» շաբաթաթերթի առաջին համարում «Գեղի կեանքէն» խորագրով տպագրած իր առաջին՝ «Հարս ու կեսուր» գործը գրողը ստորագրել է **Փափագյան** ծածկանունով, դրանից հետո տպագրածները՝ տոհմական ազգանվամբ՝ **Տեմիրձյան**, իսկ պատերազմից հետո՝ **Մնծուրի** գրչանունով: Վերջինը, փաստորեն, ոչ միայն հայրենի լեռների անունն էր ընդհանրացնելու, այլև իր կյանքն ու ճակատագիրը՝ այրված ու մոխրացած:

Իր ծննդի հետ կապված պատահարին, որին Մնծուրին ճակատագրական դեր է վերագրել, անդրադարձել է «Կավին դարը», «Առջինեկ» պատմվածքներում և այլ գրություններում: Դրանցում, ի թիվս տեղանքի այլ միավորների, հիշատակվում են նաև հայրենի լեռները: Իրենով հղի մայրը բարձրացել էր գյուղից հեռու գտնվող **Կավին դար** կոչվող լեռը՝ կավի հանքերից լվացքի ու լողանալու համար կավ բերելու. «Քանի տարին անգամ մը՝ փորձանքը պակաս չէ սա Կավին Դարեն: Վիրա կփլի: Ամա կավը չէրթան, կավը չի դրկենք՝ ի՞նչ պիտի ընենք, ինչո՞վ մեծ-պզտիկ գլուխսին, ծամերնին պիտի լվան, ամեն առտու աղբյուրը ի՞նչ պիտի տանին՝ տղոցը շորերը մաքրելու համար: Սապոնով հո՞ւն կելլվի»²⁷: Լեռան հողաշերտը փլվել էր՝ տակն առնելով մորը: Բախտի բերմամբ շրջագգեստի փեշը դուրս էր մնացել, ինչի շնորհիվ գյուղացիները նկատել և փրկել էին նրան:

Այդ դեպքից քսանհինգ օր անց տեղի է ունենում ճակատագրական ևս մեկ դեպք: Հղի մայրը միայնակ բարձրանում է լեռնալանջը՝ խոտը հնձելու: Ամայի ձորում սկսվում են երկունքի ցավերը: Եվ հենց ձորում՝ անձրևից թրջված գետնին, առանց որևէ մեկի օգ-

25 **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 28:

26 **Տե՛ս Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 463:

27 **Մնծուրի Հ.**, Երկեր, Եր., 1986, էջ 218:

նության նա լույս աշխարհ է բերում իր առաջնեկին՝ ապագա գրողին: «Ես» խորագիրը կրող ինքնանկարում Մնծուրին անդրադառնում է իր թուլություններին և իր բնագոյային վախերը կապում երկու անգամ ստույգ մահից փրկվելու հանգամանքի հետ. «Բայց իմ մեջ, միայն ծովու վախը չկար: Երկրորդ մըն ալ ունիմ, բարձր տեղէ մը վար չեմ կրնար նայիլ, գէշ կ'ըլլամ, գլուխս կը դառնայ: Մօրս պատահած արկածէ մը ժառանգած եմ արդեօք, երբ ինձմով յղի իր վերջին շաբաթը լեռ փորելով կա հանելու գնաց, լեռը փլաւ, ազատեր էին, քսանը չորս ժամ գգայագիրկ եղեր էր, մեռաւ կարծեր էին, ատկէ հե՛տք մնաց կ'ըսէք»²⁸:

Մնծուրու արձակին առանձնակի փայլ են հաղորդում հատկապես բարձրավանդակների նկարագրությունները: Դրանք, հիրավի, կարելի է համարել Արևմտյան Հայաստանի պատմաաշխարհագրական ուսումնասիրություն՝ ճանաչողական մի շարք կողմերով: Դրանցում պատկերակերտման ուշարժան միավորներ են գույները, որոնք երբեմն պարզապես դառնում են լեռների նկարագրական շերտերից մեկը, իսկ երբեմն հանդես են գալիս տեղանունների կազմում՝ ուժեղացնելով լեռների պատկերների արտահայտչականությունն ու նպաստելով դրանց ընկալմանը: Գործածված գունանունները հավելյալ իմաստային երանգ կամ բովանդակային ընդգծված առանձնահատկություն չունեն: Դրանք ընթերցողին ներկայանում են միայն արտաքին ընկալման կողմով. «Վերջին իրիկունը վանքին սարահարթին, ուրկե շուրջանակի հորիզոններուն մանիշակագույն մշուշներու մեջ կերննային վրաններու պես ետն ետնի կայնած Արաբկիրի Սարըճիչէքի լեռները, գույգ Վարդենիքներեն վար՝ Չմշկածագի տորոնի գույն վայրէջքներն ու վերելները, երկնքին կպած ու Տուժիկի ուղղությոնով ընթացող Մնծուրի ծովագույն լեռնաշղթան, ու կարկեհանի ու մեղեսիկի գույն շոգիններու մեջ կլուծվեին Կապուտկապանի ու Կապուտլուսի լեռներու թևապարը...»²⁹: Ուրեմն **Կապուտկապան** ու **Կապուտլուս** լեռնանունները կերտող անձն աշխարհն ընկալել է ըստ օբյեկտիվ իրականության, այս դեպքում՝ գույնը նկատի ունենալով³⁰: Այդ

28 **Մնծուրի 3.**, Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 190:

29 **Մնծուրի 4.**, նշվ. աշխ., էջ 194:

30 Տեղանունների ստեղծման մասին մանրամասն տես **Դիլբարյան Ն.**, Հայկական տեղանվանահիմքերի իմաստային դաշտը:

լեռները երևացել են իրենց վրա աճող ծաղիկների կամ հանքանյութերի, ինչպես գրողն է նշում, կարկեհանի և մեղեսիկի կապույտ գույնով: Այլ դրվագներում տարածաշրջանով հոսող գետերը նկարագրելիս հիշատակվում են աղի հանքերը. «Երկու գետեր ունեինք, մեկը մեր կողմը՝ Ղարապուտախը, որ շատ վերեն՝ Համիի կարմիր աղերու աղահանքերեն ու Բախտիարի ձորերեն կուգա, Եփրատը կթափի, մյուսը, Սինիպեղի տակեն, Ղոնձիտերենն ու Քեռեկի կողմերեն կուգա, նույնպես Եփրատը կթափի»³¹:

Հայրենի Արմտանն ընկած էր Մնձուրի լեռնաշղթայի դիմաց: Լեռների հարևանությամբ գտնվող գյուղերը, բացի իրենց կոնկրետ անուններից, հայտնի էին **Մունգուր լեռան գյուղեր** ընդհանրական անունով. «...Ես ալ ձեր գիւղերուն դէմի Մունգուր Լեռանը գիւղերէն եմ, ձեր Սուրբ Եղեմի վանքին ստորոտներէն, չորս գիւղերէն»³²: Գյուղացիներն այդ լեռներն անվանում էին նաև Տերսիմ ու Տուժիկ. «Հոն ելլես Տերսիմի, ուրիշ անունով Տուժիկի, ուրիշ անունով Մնձուրի լեռները, երկու կիրճերը...»³³: «Սիլա» պատմվածքում Մնձուրի լեռնաշղթայի աշխարհագրական դիրքը պատկերված է այնպիսի մանրամասնությամբ, որ երկրի մակերևույթն ուսումնասիրողի համար կազմված քարտեզ է հիշեցնում. «Չորս օրեն նավով Կիրասուն ելան: Յոթը օրեն ալ՝ հայրենիք հասան: Կապուտ Լուսի Քարս աղբյուրը եկան: Տեղացիներուն՝ Մանգուր Պապա Տաղլարը, մեզ, հայերուն՝ Մրգա լեռը, Մնձուրի լեռը երևցավ, որ Քենախեն շարունակվելով, Պեհրե Պելի, Խոսգա Պելի կիրճերովը Չմշկածագի բարձունքներեն հարավ Ակնո ուղղությամբ կընթանա»³⁴: «Քեռիին տունը» պատմվածքում ևս հանդիպում ենք **Մրգայ լեռ** անվանը: «Մեհեան»-ում տպագրված «Գիւղի գիշերներ» խորագիրն ունեցող «Քար-քաշելու գիշեր» պատմվածքի ծանոթագրություններից մեկում³⁵ և «Կռունկ ուստի՞ կուգաս» գրքի պատկեր-նախաբանում գրողը նշում է, որ Մրգա լեռը Մնձուրի լեռնաշղթան է. «...Մինչեւ լուսուն աստղը ծագի Մրգայ լեռան վրայ: Մրգայ լեռը Մն-

31 **Մնձուրի Հ.**, նշվ. աշխ., էջ 260:

32 **Մնձուրի Յ.**, Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 81:

33 **Մնձուրի Յ.**, Արմտան, էջ 65:

34 **Մնձուրի Հ.**, նշվ. աշխ., էջ 378:

35 Տե՛ս «Մեհեան», լուսատիպ վերահրատարակություն, Հալեպ, 1996, էջ 42:

ծուրի լեռնաշղթան է»³⁶: Նշված գործերում լեռը հիշատակվում է ոչ միայն իր աշխարհագրությամբ, այլև գյուղացիների համար իր նշանակությամբ: «Քեռիին տունը» պատմվածքում արտացոլված են լեռան հետ կապված գյուղացիների հավատալիքները: Համագյուղացիները Նաղաշին խորհուրդ են տալիս իր հարսնեհարած տղային բուժելու Մրգա լեռան դիմաց երեք անգամ պարելու միջոցով. «Երդիքը հանե, Մրգա լեռան դիմացը թող երեք անգամ պարե, աղել է ցավը կերթա վրայեն, – կավելցնեն»³⁷:

«Քար-քաշելու գիշեր» պատմվածքում Մնծուրի լեռը հիշատակվում է գյուղի հարսների երգած ժողովրդական երգերում, որոնց բնագրերը գրողն անբողջությամբ մեջբերում է. «Հով մը Մրգայ լեռնէն // Մեր դռան ախլանքը կը ծեծէ, // Աժեմ հովերը թող ծեծեն, // Չաժեմ հովերը ինչո՞ւ ծեծեն»³⁸: Կամ՝ «Աղբիւր մը Մրգայ լեռը // Քօքն ուռուն տակը կը շառչէ, // Գլուխն արծթէ դրեր, // Որ ոսկուն գուռը կը շառչէ»³⁹: Հիշատակված սիրերգերում Մրգա լեռը՝ որպես բնապատկեր, կապվում է երգի քնարական զգացումների հետ՝ դառնալով գյուղի հարսների սիրո ու կարոտի զգացումներն արտահայտելու միջոց:

2. Տեղավայրերի պատկերները՝ հեղինակային ես-ի տարաշերտության դրսևորումներ

Հայտնի է, որ Արմտանը լեռնային երկրամաս է՝ շրջապատված ձորակներով ու կիրճերով: Այդ փաստը և՛ հերոսների խոսքի ու գործողությունների, և՛ հեղինակային խոսքի միջոցով հաճախ է կերպավորվում: Լինելով լեռնային երկրամաս՝ Արմտանը բացառում և պարտադրում էր երկրագործական որոշակի աշխատանքներ. «Մեր նախնիքները արտ չէին ըրեր: Տարածություն չկար: Բայց գետափերը, ձորերը, ուր քռա չէր, ավազ էր, հողերը հարստացուցեր էին իրենց ախոռներու, գոմերու աղբերովը: Եվ հեղեղներու բերած տիղմերովը: Գետիներուն ամենեն բարեբերը դարձուցեր էին: Մեր նախնիքը տասներկու հանդեր ձգեր էին մեզի: Գետին աջը Լե-

36 **Մնծուրի Յ.**, Կռունկ ուստի՞ կուգաս, էջ 6:

37 **Մնծուրի Հ.**, նշվ. աշխ., էջ 191:

38 «Մեհեան», էջ 42:

39 Նույն տեղում:

ղիակի, Խառիճակի, Կապաններու, Ջերմայի, Կարմիր հողերու, Վարեհանդի էգիները, ձախը՝ Եղիակի, Անծեղկայի, Գողուն ձորի, Մասուր ձորի, Պեքիրցիքի էգիները: Առուներու ցանցով մը շրջապատեր էին բոլոր հանդերը, յուրաքանչյուրը քսանհինգեն մինչև ութսուն, հարյուր այգիներովը»⁴⁰:

Մնծուրու պատումի շեշտերը փոխվում են, երբ պատկերվում են լեռնալանջերին փռված այգիները և իր հողի վրա քրտինք թափող գյուղացին: Եթե աշխարհագրական այլ վայրեր պատկերող դրվագներում առավելապես երևում է աշխարհագրական փաստը պատկերի վերածող գրողի վարպետությունը, ապա արտերի ու այգիների աշխատանքային տեսարանները ներկայացնելիս այդ վարպետությանը գումարվում է հողի ու աշխատանքի նկատմամբ Մնծուրու ունեցած առանձնակի սերը: Սիրո այդ դրսևորումներից ելնելով՝ Մնծուրու ստեղծագործությունը համարվել է աշխատանքի փառաբանություն. «Ոչ միայն մայրերի փառերգ ու օրհներգ է Մնծուրու ստեղծագործությունը, այլև աշխատանքի: Ի՛նչ սիրով, ի՛նչ քնքշությամբ է Մնծուրին նկարագրում այդ մարդկանց ծանր ու տարիների հեռվից երանելի թվացող աշխատանքը: Ի՛նչ գործվանքով են նրանք մշակում իրենց դժվար հողի ամեն թիզը, ինչպես են գուրգուրում ամեն թփի ու ծառի վրա, ինչպես են հատիկ առ հատիկ հավաքում տետեզքի տաք ավազին կաթած քաղցր, փխլվող թուրը...»⁴¹: Նման պատկերները բացահայտում են նաև Մնծուրու ես-ի տարաշերտությունը՝ հողագործ գյուղացի և մտավորական. «Ամէն տարի Ապրիլ 15-ին դպրոցը փակեցի: Ամէնուն պէս մը եղայ: Գիւղացի մը, հողագործ մը: Տղայութեանս գիւղացի մը չէ՞ի արդէն: Անոր շարունակութիւնը եղայ, կերպարանափոխուեցայ: Գարնցանը ըրի, ցորենը, գարին, վիկը ցանեցի, պապերուս հինգհազար տարուան երկրագործութիւնը ըրի, եզները առջեւ, ես անոնց ետեւը, մաճը աջ ձեռքս, արօրը կառավարեցի, մականը ձախ ձեռքս եզնոցը ուղղութիւն տուի: Արօրով արտերը ակօսեցի, տափանով հողերը հարթեցի, գորշ արտերը սրճագոյն եղան»⁴²: Գե-

40 Մնծուրի Հ., նշվ. աշխ., էջ 426:

41 Դավթյան Վ., Մաթևոսյան Հր., Հեռացող աշխարհի առաքյալը, էջ 3:

42 Մնծուրի Յ., Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 176:

ղարվեստական այս դրվագում «պապերուս հինգհազար տարուան» արտահայտությամբ գրողը ցույց է տալիս հայ ազգի պատմական վաղեմությունը և տոհմիկ հայ գյուղացուն՝ բնության ու համազյուղացիների հետ ներդաշն գոյությամբ, ազնիվ ու ստեղծարար աշխատանքի բերկրանքով լցված: Իսկ եթե հինգհազարամյա պատմություն ունեցող այդ հողերի վրա աշխատող մարդու ականջը նախնյաց պատգամներին է, ուրեմն հող-հայրենիքի տիրոջ իրավունքը պետք է պատկաներ նույն ազգի սերունդներին. «Գյուղին հարավի ու արևմուտքի մասերուն արտերը ցանված չէին, արոս էին: Ջրկորուսի դաշտին, Վերն-Աղբյուրիկի լեռան, Կապուտ-Կապաններու, Եփրատի սարալանջերու կողմն էր քաղը: Մեր պապերեն մնացած կարգադրություն մըն էր ատիկա, արտերը երկու խումբի բաժներ էինք, հաջորդաբար մեկը արոս կթողնեինք, մյուսը կցանեինք»⁴³: Սակայն այդ իրավունքը խլվեց «Թուրքիան՝ թուրքերին» կարգախոսի հեղինակների կողմից:

Մնծուրու արձակի տեղագրական պատկերներում նկատելի են պատանդված ինքնության և ստեղծագործական անազատության խնդիրներ: Անազատության, անօգնականության և անպաշտպանվածության զգացողությունը դրսևորվել է նաև Մնծուրու վարքագծում, հատկապես երբ նա գտնվել է բաց տարածության մեջ: Բանաստեղծ Արսեն Ճանյանը հիշում է. «Թաց տեղ նստած մարդու պես անհանգիստ էր: Մտքերը հավաքել, կենտրոնանալ չէր կարողանում: Չորս կողմը բաց էր, նշանակում էր, չորս կողմից անպաշտպան էր»⁴⁴: Յաթաղանի հարվածը Արմտան աշխարհի հավերժական բնակչին վերածեց Կ. Պոլսի հավերժական բանտարկյալի. «Ես ի՞նչ գո՛րծ ունեի այս քաղաքը: Դէպքերը զիս հոս հաստատեցին: Ինձի մնայ ես չէի բաժնուեր մեր բարձրավանդակէն, մեր քնարական գետափերէն: Ես պատանդ մըն եմ ու պատանդ ըլլալով դատապարտուած եմ հոս ապրելու»⁴⁵: Նա բանտարկյալ էր ու զոհ, որի ճիչն անգամ, ըստ Հ. Մաթևոսյանի, խժոեղ էր թուրքը⁴⁶: Գրականագետ Ա. Ավագյանը գրում է. «Մնծուրու գործերում եղեռնը հանդես է գալիս յուրովի խորքային լռությամբ, որը կարելի է

43 Մնծուրի Հ., նշվ. աշխ., էջ 87:

44 Ճանյան Ա., Այս աշխարհում ապրեց Մնծուրին, «Գրական թերթ», 1991, մարտ, N 9, էջ 3:

45 Մնծուրի Յ., նշվ. աշխ., էջ 189:

46 Տե՛ս Մաթևոսյան Հ., Անընդհատ, անվերջ վերադարձ, Մնծուրի Հ., նշվ. աշխ., էջ 534:

անվանել «լռության ձի»։ Այն չի ցուցադրվում և կամ նկարագրվում։ Այդ գրականությունը «խոհի ու խոկուսի գրականություն» է, որում ամեն ինչ ասվում է տողատակում, և հեղինակային ասելիքը պետք է տեսնել բառերի սահմանից այն կողմ, «չասվածի» մեջ, ավելի ստույգ՝ ասվածի, բայց չգրվածի մեջ, այդ գրականության իմաստը պետք է տեսնել ոչ թե կարդացածի, այլ զգացածի մեջ»⁴⁷։ Գրականագետ Վ. Գաբրիելյանը ևս այս առանձնահատկության հարցում ընդգծում է ընթերցողի դերը. «Եղեռնի՝ ջարդի ու արքայի մասին չգրեց Մնձուրին։ Հասկանալի է, իր ապրած երկրի իր ժամանակներում նա (և ոչ միայն նա) այդ մասին ակնարկել անգամ չէր կարող։ Բայց խոսուն է Մնձուրու «լռությունը»։ «Ի՞նչ եղան... ո՞ւր կորան» հարցը նա չտվեց։ Բայց այդ հարցը տալու է ամեն ընթերցող, որ կարդացել ու կարդալու է Մնձուրու պատկերած գյուղի ու նրա մարդկանց մասին. ինչո՞ւ այլևս այդ հողերի վրա չեն ապրում նրա իսկական տերերը։ Ուրեմն Մնձուրու ստեղծագործությունը լուռ, բայց խոսուն բողոք է կատարված մեծագույն ոճիրի դեմ»⁴⁸։ Գրականագետ Ս. Ավետիսյանը գրում է. «Մնձուրին այդ ձիչը վերածեց գրի՝ հայրենական գյուղանկարների, ու պատմեց իր կորած հին երկրի պատմությունը, արմատախիլ արված **մենք**-ի պատմությունը»⁴⁹։ Այդ ձիչը, իհարկե, պահանջատիրոջ բացահայտ աղաղակ չդարձավ։ Այս հարցում հեղինակային անդրադարձները, հասկանալի պատճառներով, բացահայտ չեն։ Նրա քողարկյալ «ըմբոստությունը», որ երբեմն դրսևորվում է հպանցիկորեն, իսկ երբեմն էլ՝ քնարական շեղումների միջոցով, վերաբերում է նաև տեղանունների փոխակերպումներին։ Հայտնի է, որ թուրքական քաղաքականության հետևանքով բնիկ հայ ժողովրդի բռնի արտաքսումից հետո աղավաղվեցին հայկական տեղանունները, որոնք, ինչպես գիտենք, ազգացուցիչ նշաններ են, և դրանց ճշգրտումը շատ կարևոր է հայկական ինքնության համար։

3. Տեղանունները՝ երկրի պատկանելության ապացույցներ

Տեղանունների պարտադիր հիշատակումները, տեղավայրերի՝ մեծ ուշադրությամբ ու շրջահայեցությամբ կերտված պատկերները

47 **Ավագյան Ա.**, Հակոբ Մնձուրին և ազգային աղետը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2009, N Ը, էջ 68:

48 **Գաբրիելյան Վ.**, Պատմության խորհուրդը և ներկան, Եր., 2012, էջ 298:

49 **Ավետիսյան Ս.**, Գիր և ինքնություն, Եր., 2016, էջ 94:

պայմանավորված են Մնծուրու առաջնահերթ նպատակով, այն է՝ ցույց տալ, որ պատկերվող երկրամասը հայկական բնաշխարհի մի մասն է: Ա. Ավագյանը նկատում է. «Իր պատմվածքներում հայրենի կենդանության շունչը Մնծուրին պահպանում է նաև տեղանունների հիշատակումներով, տեղավայրերի մանրակրկիտ նկարագրություններով՝ նպատակ ունենալով շեշտել, որ այդ վայրերը հայկական, հայաբնակ ու հայաշեն են եղել»⁵⁰:

Գրողի հիշատակած հայկական աշխարհագրական անվանումների իմաստները՝ հասկանալի, և նրա գործերն առավել իմաստալից են դառնում, երբ բնաշխարհը նկարագրող բառերի իմաստները քննում ենք ավանդագրույցների և տեղանունների բառարանի հաղորդած տեղեկություններին զուգահեռ: Աշխարհագրական անվանումների նման քննությունն ապացուցում է, որ հայկական տեղանունները պատճառաբանված են, իսկ թուրքերի տված անվանումներն ու վերանվանումները՝ անիմաստ ու արհեստական: Որպեսզի մեր աշխատանքը չձանրաբեռնենք բնագրերում հիշատակված տեղանունների (դրանք շատ-շատ են) ստուգաբանությամբ, անդրադառնանք միայն նրանց, որոնց թրքացված ձևերին անդրադարձել է ինքը՝ հեղինակը:

«Արմտանի այգիներ» պատմվածքում Մնծուրին գրում է. «Ի՛նչ տաք կըլլային մեր ձորերը: Եփրատին անմիջապես կից էին, ձախը: Մենե վար՝ Ակը, Ակեն վար՝ Կապանն էր, հիմիկվան անունով Քեպանը, ուր երկրին մեծագույն ամբարտակը՝ պատաժը, կկառուցվի»⁵¹: Ի՛նչ կարող է հաղորդել **Քեպան**-ի վերածված **Կապան** անվանումը: Ինչպես հայտնի է, **կապան** բառը նշանակում է «**կիրձ**»: Իսկ տեղանվանագետները նշում են, որ հնագույն տեղանունները պատասխանում էին «ի՛նչ է անվանվող օբյեկտը» կամ «ինչպիսի՞ն է այն» հարցերին⁵²: Լեզվաբանական այս հարցերի հետ ուղիղ առնչություն ունի գեղարվեստական հետևյալ դրվագը. «Նույն ճամբուն կարգին՝ Կապանները կան: Կիրձ մըն է: Բարձրավանդակին այգիները իջնելու համար հոնկե պիտի անցնիս: Կիրձին երկու կողմն ալ

50 Ավագյան Ա., նշվ. աշխ., էջ 71:

51 Մնծուրի Հ., նշվ. աշխ., էջ 426:

52 Տե՛ս Դիլբարյան Ն., Անձնանուններից կազմված տեղանունների իմաստաբանական դաշտը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, N 3, էջ 171:

վայրի, ահեղ տեսարաններով են»⁵³: Ներկայումս տարածքը կոչվում է **Քերանմաղեն**, որը բաղադրված է հայերեն **կապան** և թուրքերեն **մաղան** (հանք, հանքավայր) բառերից: **Լիճք** տեղանունը նույնպես պատասխանում է «ի՞նչ է անվանվող օբյեկտը» հարցին: Տարածքը **Լիճք** է կոչվել հորդաբուխ աղբյուրներից առաջացած լճակների պատճառով: Թուրքերը դրան նույնպես այլ անվանում են տվել. «Հիմա շոգեկառքը դեմի ափեն կանցնի՝ Եփրատեն, Լիճքեն: Հիմակվան անունով՝ Ըլըճեն»⁵⁴:

Կամախ տեղանվան մասին Մնձուրին գրում է. «Շոգեկառքը Եփրատի դեմի ափէն կ’երթայ, Կամախի, այսինքն Քեմախի չմօտեցած, խել մը ասդիէն, Պեհրէ Պելին անցիր, Տերսիմի, հիմա Թունձէլի կ’ըսեն, անոր Ովաճըլխին փէշերուն ձիշդ դիմացն է»⁵⁵: «Իմ գաւառիս թուրքերէնը» պատմվածքում **Կամախի** անվանումը, որ թուրքերը դարձրել են **Քեմախ**, կապվում է խեթական արձանագրություններում հիշատակվող Հայասայի մայրաքաղաք Կումմախայի անվան հետ. «Քէմախը՝ հեթական սեպագրութեանց մէջ յիշատակուած Կումմախան՝ Խայասայի կամ Հայասայի նախահայերու հնագոյն հայերու քաղաքը՝ որ Արշակունիներու օրով Անի Ամրոց եղաւ ու միջին դարուն հիւսիս փոխադրուելով Բագրատունիներուն Անին եղաւ...»⁵⁶: Ըստ տեղանունների բառարանի՝ **Կամախ**-ի իմաստը կապվել է «կմախք» բառի հետ՝ նկատի առնելով այն փաստը, որ հնում այդտեղ էր գտնվում Արշակունի թագավորների գերեզմանոցը⁵⁷: Ունաք էլ կարծում են, թե շրջակայքում կաղամախու շատ ծառեր լինելու պատճառով է գյուղաքաղաքը **Կամախ** կոչվել:

Այլ տեղանունների համեմատությամբ՝ առավել շատ է անդրադարձը հայրենի գյուղի անվանը, որից պարզ է դառնում, որ Մնձուրին լավատեղյակ էր իր բնաշխարհի պատմական անցյալին: Արմտանի վաղեմությունը ցույց տալու համար նա բերում է մի շարք վկայություններ. «Սեբաստացի էր, Խոճասարէն, որ հիմա Հաֆիքի փո-

53 **Մնձուրի Հ.**, նշվ. աշխ., էջ 423:
 54 Նույն տեղում, էջ 429:
 55 **Մնձուրի Յ.**, Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 181:
 56 **Մնձուրի Յ.**, Արմտան, էջ 66:
 57 Արշակունիների դամբարանը ներկայումս գտնվում է Արագածոտնի մարզի Աղձք գյուղում:

խեցին, ինչպէս իմ գիւղս Արմտանը, Արմութլու ըրին: Թէեւ «արմութ»ի, տանձի յետին առնչութիւն մը չունի, Ք. Ա. Հիթիթներու օրերուն, երկրորդ հազարամեակին Արմտանն է, Ղայասայի նախահայերու, խայերու բնակավայր մը»⁵⁸: Պատմական այս սկզբնաղբյուրին՝ որպէս Արմտանի «ծննդան վկայականի», Մնձուրին անդրադառնում է տարբեր գրվածքներում՝ ամեն անգամ այն հարստացնելով նոր տեղեկություններով: Իր ժամանակագրություններից մեկում նա գրում է. «Արմտանը՝ որ բառացիօրէն ու տեղագրութիւնովը ճիւփ-ճիւղ՝ երեք հազար հինգ հարիւր տարի առաջուան հեթական սեպագրութիւններուն մէջ յիշատակուած Խայաշայի Խայերու՝ մեր նախահայրերուն Արմատանն է, իմ զոյգ գիւղերուս անունն է»⁵⁹: «Արմտանի այգիներ» պատմվածքում **Արմտան**-ը հիշատակվում է որպէս գավառի անուն. «Մենք Արմտայաց գավառն էինք, հին հիշատակարանի մը մէջ հիշված»⁶⁰: Ըստ տեղանունների բառարանի՝ Արմտանը խեթական արձանագրության մէջ թվագրվում է Ք. ա. XV-XIV դարերով, և նշվում է, որ **Արմտան** անվան մէջ պահպանվել է **արմեն** ցեղանվան տարբերակներից մեկը:

Հետաքրքրական են նաև տեղանուններին վերաբերող ավանդությունները: Ա. Ղանալանյանը Մնձուրու գործերում բազմիցս կերպավորվող Դերսիմի լեռներին վերաբերող ստուգաբանական-բացատրական ավանդության մէջ նշում է, որ ջալալիների ասպատակություններից խուսափելու համար տեղացի հայերը իրենց՝ Տեր-Սիմոն անունով քաջարի ու բանիմաց քահանայի խորհրդով իսլամանալու փոխարեն ընդունում են հարևան ակնի քրդերի կրոնը և ապահով ապրում: Ի պատիվ քահանայի՝ նրանք իրենց լեռնաշխարհն անվանում են **Տերսիմոն**, որը ժամանակի ընթացքում դառնում է **Տերսիմ**⁶¹: Ներկայիս անվանումը՝ **Թունջելի**, որ թուրքերեն **բրոնզ** արմատի հետ է կապված, հավանաբար կապված է այն փաստի հետ, որ տեղանքում բրոնզի հանքեր կան:

Ինչևէ, թշնամու կնքած տեղանունները չեն կարող հօդս ցնդեցնել դրանց հայկական ծագման փաստը, որովհետև խլված աշխարհի

58 **Մնձուրի 3.**, Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 120:

59 **Մնձուրի 3.**, ժամանակագրութիւն, «Մարմարա», 1963, 28-ը նոյեմբերի:

60 **Մնձուրի 4.**, նշվ. աշխ., էջ 429:

61 Տե՛ս **Ղանալանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 155:

իրական տերերը գրի միջոցով անմահացրել են ճշմարտությունը: Պատմական սկզբնաղբյուրները, որոնք Մնձուրին օգտագործում է որպես վկայություններ, երկրի պատկանելության հիմքեր են. «Աս ըսեմ որ իմ Արմտանս ու արմտանցիներս մեր տեղահանութենէն առաջուան Արմտանն ու արմտանցիներն են: Յիսուն տարի առաջուանը: Հիմակուանը չէ: Հիմա ատ Արմտանը չկայ: Տեղը, անունը կայ միայն: Հիմա հոն եղողները, եկտրները ուրկէ՞ են, ո՞վ են: Գիւղին անունը կը շարունակո՞ւի, միւս տեղերո՞ւնը: Կապոյտ Լոյսի Լերան ի՞նչ կ'ըսեն, դիմացի Կապոյտ կապաններո՞ւն: Սուրբ Եղիայի Լերա՞ն, Սեւքարի՞ն, Սուրբ Սարգսայ կողերո՞ւն: Սուրբ Սարգիսը չկայ հարկաւ: Խաչի դարի՞ն, Կաքաներու Քարի՞ն, Հնձանի՞ն, Ավգին Ձորի՞ն»⁶²: «Տեղեր ուր ես եղեր եմ» ժողովածուի պատումներից մեկում ազգությամբ թուրք բեկը, որն իրական անձնավորություն է, նշում է իր ազգի եկվոր լինելու հանգամանքը՝ ասածը հաստատելով «ձեր գյուղերի», «ձեր Սուրբ Եղեմի վանքի» արտահայտություններով և հայկական գյուղերի տակավին չփոփոխված հայկական անվանումներով. «...Ես ալ ձեր գիւղերուն դէմի Մունգուր Լերանը գիւղերէն եմ, ձեր Սուրբ Եղեմի վանքին ստորոտներէն, չորս գիւղերէն: Մինչև հիմա ալ մեր գիւղերուն անունները հայերէն են, Վարի Վարդենք, Վերի Վարդենք, Սերկեւիլ, Սուրբ Թորոս»⁶³: Թուրք բեկը վերապրում է անցյալի դեպքերը, և նրա խոսքը պարուրվում է հուզմունքով: Նրա համար հավանաբար դժվար էր մեղանչել պատմական արդարության առաջ կամ լռեցնել արյան կանչը. «Ես Սուրբ Թորոսի եմ, ժամանակաւ, ով գիտէ քանի հարիւր տարի առաջ մեր պապերուն պապերը հայ են եղեր, իսլամացեր են, իմ տունս երկու պղինձէ ափսէ կայ, հայերէն գրերով Ակոբ գրուած է, ով գիտէ մեր որ պապուն անունն է»⁶⁴:

Մեր աշխատանքն ամփոփենք Հրանտ Մաթևոսյանի խոսքերով. «Մնձուրին առաքյալն է անցած-գնացած մի մեծ աշխարհի և առաքված է չավելացնելով և չպակասեցնելով ասելու համար, թե ովքեր կային, որ հիմա չկան»⁶⁵: Իսկապես անգնահատելի է Հակոբ Մնձուրու ստեղծագործական սխրանքը՝ որպես Արևմտյան Հայաստանի

62 «Մարմարա», 1963, 28-ր նոյեմբերի:

63 Մնձուրի 3., Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 82:

64 Նույն տեղում, էջ 82:

65 Դավթյան Վ., Մաթևոսյան Հր., Հեռացող աշխարհի առաքյալը, էջ 3:

տանի մի փոքրիկ երկրամասն ու նրա մարդկանց կյանքը պատկերագրողի և կերպավորողի: Նրա պատմվածքների տեղագրական պատկերներն իրավամբ կարելի է համարել Երզնկա գավառի տեղագրության գեղարվեստական կարևոր փաստաթղթեր-վավերաթղթեր: Թուրք թալանչիները չքացրել են քարտեզի վրայից այն, ինչը կոչվում է Արևմտյան Հայաստան: Բայց եթե փորձենք ի մի բերել Մնձուրու արձակուն սփռված տեղագրական պատկերները, ապա կստանանք Արևմտյան Հայաստանի Երզնկա գավառի իրական քարտեզը, քարտեզ՝ այսօր արդեն, ցավոք, առանց բնաշխարհի մարդկանց ու կենցաղի:

Մարինե Գ. Ղազարյան – ունի տպագրված մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածներ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է սփյուռքահայ գրականությունը և քննադատությունը, ազգագրությունը:

Էլ. հասցե՝ marinekazaryan@ysu.am

Summary

TOPOGRAPHICAL IMAGES IN HAKOB MNDZURI'S SHORT STORIES

Marine D. Ghazaryan

Key Words - Hakob Mndzuri, national identity, patriotism, value system, creative concern, topographic images, place names, Turkified names.

This article is dedicated to the study of topographical images in the prose of Diaspora Armenian writer Hakob Mndzuri. Mndzuri's prose stands out for its complete and comprehensive images of the place, written with the knowledge of an artist formed from close contact with native nature. Those images help to develop an idea about the geography of this or that part of Western Armenia and are important in order to get a broad picture of the national identity.

Mndzuri's texts provide extensive opportunity to reveal this important layer of identity, because in his works the place of birth as a geographical area is uniquely

же указанием их прежних, армянских, и нынешних, турецких, названий. Мндзур очень хорошо понимал, что топонимы являются признаками армянской идентичности и содержат ценную информацию о переименованных географических единицах. Эти топонимы представлены как художественные документы топографии провинции Ерзнка Западной Армении и акцентируют наше внимание на специальных названиях, отражающих мир природы. В центре внимания писателя находятся также тюркизированные названия армянских населенных пунктов, прежние названия которых этимологически анализируются параллельно со сведениями из словаря топонимов и традиционных сказаний.

Параллельно обсуждаются особенности образного мышления Мндзури, подчеркиваются его творческие интересы, многоуровневость концепции «Я» и система исповедуемых им ценностей. Благодаря мастерству писателя, его топографические образы обладают впечатляющей художественностью и высокой подлинной ценностью. Они имеют важное значение в плане познания Родины и сохранения национальной идентичности.

REFERENCES

1. “Marmara”, K. Pölis, 1963, 28-ě noyemberi **(In Armenian)**.
2. “Mehean”, lusatip verahratarakut‘iwn, Halēp, 1996 **(In Armenian)**.
3. **Avagyan A.**, Hakob Mndzurin yev azgayin aghetě, “Ējmiatsin”, S. Ējmiatsin, 2009, N E **(In Armenian)**.
4. **Avetisyan S.**, Gir yev ink‘nut‘yun, Yer., 2016 **(In Armenian)**.
5. **Chanyan A.**, Ays ashkharhum aprets‘ Mndzurin, “Grakan t‘ert’”, Yer., 1991, N 9 **(In Armenian)**.
6. **Danielyan S.**, Hakob Mndzuri, “Kanch’”, Yer., 1999 **(In Armenian)**.
7. **Davt‘yan V.**, Mat‘evosyan H., Herats‘ogh ashkharhi arak‘yalě, “Grakan t‘ert’”, Yer., 1991, N 47 **(In Armenian)**.
8. **Dilbaryan N.**, Andznannerits‘ kazmvats teghanunneri imastabanakan dashtě, “Banber Yerevani hamalsarani”, Yer., 2003, N 3 **(In Armenian)**.
9. **Dilbaryan N.**, Haykakan teghanvanahimk‘eri imastayin dashtě, “Banber Yerevani hamalsarani”, Yer., 2007, N 1 **(In Armenian)**.
10. **Gabrielyan V.**, Patmut‘yan khorhurdě yev nerkan, Yer., 2012 **(In Armenian)**.
11. **Gabrielyan V.**, Sp‘yurk‘ahay grakanut‘yun, Yer., 2016 **(In Armenian)**.
12. **Ghanalanyan A.**, Avandapatum, Yer., 1969 **(In Armenian)**.
13. **Hakobyan T‘. Kh., Melik‘-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits‘ shrjanneri teghanunneri bařaran, hat. 3, Yer., 1991 **(In Armenian)**.
14. **Hattěchean R.**, Asulis mtaworakani mě het, “Marmara”, K. Pölis, 1958, 1-ě mayisi **(In Armenian)**.
15. **Mat‘evosyan H.**, Spitak t‘ght‘i arjev, Yer., 2004 **(In Armenian)**.
16. **Metsarents‘ M.**, Yerkeri liakatar zhoghovatsu, Yer., 1981 **(In Armenian)**.
17. **Mndzuri H.**, Yerker, Yer., 1986 **(In Armenian)**.

18. **Mndzuri Y.**, Tegher ur yes yegher em, Ist'anpul, 1984 (**In Armenian**).
19. **Mndzuri Y.**, Armtan, Ist'anpul, 1966 (**In Armenian**).
20. **Mndzuri Y.**, Zhamanakagrut' iwn, "Marmara", K. Pölis, 1963, 28-ě noyemberi (**In Armenian**).
21. **Mndzuri Y.**, Krunk usti kugas, Ist'anpul, 1974 (**In Armenian**).
22. **Ter-Khach'atryan Y.**, Khaghagh togher, Yer., 2021 (**In Armenian**).
23. **Varuzhan D.**, Yerkeri liakatar zhoghovatsu yerek' hatorov, hat. 3, Yer., 1987 (**In Armenian**).

ՀԱՎԵԼՎԱԾ

ՎԷՄ հասնահայկական հանդես, ԺԴ (Դ) փարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022